ՎԱՐԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վարկատեսակի անվանումը	**<<ՀԻՓՈԹԵՔ-ԳՆՈՒՄ>> /բնակելի գույքի/**
Վարկի նպատակը	**Բնակելի նշանակության շենք-շինությունների (գնման, կառուցման իրավունքի) գնում, կառուցում**
Պայմանները սահմանող մարմինը, որոշումը	**<<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ Խորհրդի <<11>><<դեկտեմբերի>>2023թ-ի թիվ 17 որոշում**
Պայմանների գործողության ժամկետը	**Սկսած <<18>><<դեկտեմբերի>>2023թ-ից**
Վարկի ձևակերպման վայրը	**<<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ գլխամասային գրասենյակ, մասնաճյուղեր**
Վարկի արժույթը	**ՀՀ դրամ**
Վարկի տրամադրման ձևը	**Անկանխիկ (միանվագ կամ փուլային)**
Վարկի նվազագույն գումարը	**5.000.000 ՀՀ դրամ**
Վարկի առավելագույն գումարը	**50.000.000 ՀՀ դրամ**
Վարկի առավելագույն ժամկետները	**15 տարի – 12.000.000 ՀՀ դրամ գումարը գերազանցող վարկերի համար** **12 տարի – մինչև 12.000.000 ՀՀ դրամ գումարով վարկերի համար**

Վարկի տարեկան անվանական, փաստացի տոկոսադրույքները և ծառայության միանվագ վճարը

Վարկի գումար /ՀՀ դրամ/	Տարեկան նվազագույն անվանական տոկոսադրույք	Վարկի տրամադրման ծառայության մեկանգամյա վճար /% տրվող վարկի գումարից/	Տարեկան փաստացի տոկոսադրույք
12.000.001 - 50.000.000	13,7	0,7	14,77
5.000.000 - 12.000.000	14,2	0,7	15,42

Վարկի և տոկոսագումարների վճարման եղանակը	**Վարկի մարման եղանակ – ամենամսյա (հավասարաչափ կամ ոչ հավասարաչափ)** **Տոկոսագումարների վճարման եղանակ – ամենամսյա**
Վարկի մարման դադարի շրջանը	**կարող է սահմանվել վարկի մայր գումարի դադարի շրջան, ոչ ավել, քան տրամադրվող վարկի ընդհանուր ժամկետի 1/5-ը**
Տոկոսագումարների հաշվարկման կարգը	**Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով, տարվա օրացուցային օրերի քանակով**
Անվանական տոկոսադրույքի փոփոխությունը	**Վարկի անվանական տոկոսադրույքը պայմանագրի գործողության ընթացքում մնում է անփոփոխ՝ հաստատուն**
Ժամկետանց վարկի տոկոսադրույքը	**տարեկան 24%**
Ժամկետանց տոկոսագումարի տույժը	**օրական 0,13%**
Պարտքի գանձման հերթականությունը	**Տույժեր, տոկոսագումարներ, վարկի մայր գումար**
Վարկի վաղաժամկետ մարումը	**Վարկի վաղաժամկետ մարման համար պայմանագրային առաջին երեք տարիներին Ընկերության պահանջով կարող է սահմանվել է տուգանք, հետևյալ չափերով՝ 1-ին տարի - վաղաժամկետ մարված գումարի 0,6%-ի չափով, 2-րդ տարի - վաղաժամկետ մարված գումարի 0,4%-ի չափով, 3-րդ տարի - վաղաժամկետ մարված գումարի 0,2%-ի չափով:** **Տուգանք չի սահմանվում այն դեպքում, երբ Վարկառուն պայմանագրային տարվա որևէ պահի վաղաժամկետ մարում է այդ պայմանագրային տարվա համար մարման ժամանակացույցի համաձայն մարման ենթակա Վարկի մայր գումարը:** **Սույն կետի կիրառման նպատակով պայմանագրային տարի է համարվում Պայմանագրի կնքման ամսաթվին հաջորդող յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածը:** ***Օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Ընկերության եկամուտը ձևավորող վճարները: Վարկի վաղաժամկետ մարման դեպքում վարկառուի ընտրությամբ՝ ա/վաղաժամկետ մարված գումարին համամասնորեն նվազեցվում է ամսական վճարումների չափը՝ թողնելով վարկի մարման ժամկետն անփոփոխ, կամ բ/նվազեցվում է վարկի մարման ժամկետը՝ ամսական վճարումների չափը թողնելով անփոփոխ:***
Վարկի վերաներդրման հետ կապված վնասի փոխհատուցումը	**Վարկի վաղաժամկետ մարման դեպքում Վարկառուն փոխհատուցում է վարկի վերաներդրման հետ կապված Վարկատուի կրած վնասը, որի չափը հաշվարկում է Վարկատուն՝ գործող օրենսդրության և իր ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:**

ՎԱՐԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Վարկի ապահովման միջոցները	**Գրավ՝ անշարժ գույք /անշարժ գույքի գնման կամ կառուցման իրավունք/, որն Ընկերության համար ունի բավարար լիկվիդայնության /իրացվելիության/ աստիճան.** **- Գլխամասային գրասենյակի համար՝ ՀՀ տարածքում գտնվող անշարժ գույք,** **- մասնաճյուղերի համար՝ Երևանում, երևանամերձ տարածքներում և վարկ տրամադրող մասնաճյուղի տեղակայման տարածաշրջանում գտնվող անշարժ գույք** **Գրավի առարկա կարող է հանդիսանալ ինչպես վարկի գումարով գնվող/կառուցվող/, այնպես էլ այլ անշարժ ու շարժական գույք:**
Վարկի գումար/գրավի գրավադրման արժեք առավելագույն հարաբերակցությունը ըստ գրավ դրվող գույքի տեսակների	**բնակելի նշանակության շենք-շինություններ - 80%** **առևտրային, արտադրական, հասարակական նշանակության շենք-շինություններ - 75%** **հողամասեր - 70%**
Կանխավճարի նվազագույն չափ	**20% (կախված գրավի տեսակից): Կանխավճար կարող է չպահաջվել կամ պահանջվել ավելի քիչ՝ լրացուցիչ գույք գրավադրելու դեպքում:**
Գրավադրման հետ կապված ծախսերը	**Գրավ դրվող գույքը ենթակա է գնահատման, իսկ գրավի պայմանագիրը՝ նոտարական վավերացման և պետական գրանցման: Գրավադրման հետ կապված անհրաժեշտ բոլոր ծախսերը՝ գույքի գնահատման, նոտարական վավերացման և պետական գրանցման, կատարվում են հաճախորդի կողմից:**

ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հաճախորդի տարիքային սահմանափակումները	**Վարկառուի նվազագույն տարիք - 22 տարեկան** **Վարկառուի, Գրավատուի առավելագույն տարիք /վարկի մարման վերջնաժամկետի դրությամբ/ - 68 տարեկան**
Երաշխավորի պահանջը	**Վարկային հայտի առանձնահատկություններից ելնելով, որոշ դեպքերում կարող են պահանջվել երաշխավորներ**
Ապահովագրության պահանջը	**Չի պահանջվում**